№ 7 (11)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2021

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

7 (11)

ԵՐԵՎԱՆ 2021
ЕРЕВАН 2021
YEREVAN 2021

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №7 (11). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2021. – 202 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

К ВОПРОСУ ПОНИМАНИЯ ПОНЯТИЯ «ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКОЕ ПОЛЕ»

Арташес Редикович Мартиросян
artashesmartirosyan@yandex.ru

К.ф.н., доцент, зам. декана факультета культуры,
Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В современной лингвистике до сих пор нет общего определения понятия лексико-семантического поля. Однако совершенно очевидно, что под этим понятием обобщаются основные задачи лексикологии: синонимия, антонимия, многозначность, границы соотношения и реализации слова и понятия.

В аспекте макета отражения языковой картины мира, исследования семантических полей и сегодня не потеряли своей актуальности, став родоначальником новой отрасли языкознания – антропологической лингвистики. Исследование семантических полей дает возможность рассматривать функционирование языка в ракурсе влияния биологических, психологических, социальных и культурно-национальных факторов.

Ключевые слова: лексический состав, лексико-семантическое поле, понятийное поле, парадигматические отношения, синтагматические отношения, эпидигматические отношения, классы слов, семантический признак, экстралингвистический фактор, внутрилингвистический фактор.

XX դարի վերջին տասնամյակներն ու XXI դարը լեզվաբանական ուսումնասիրություններում ծանրակշիռ տեղ են զբաղեցնում բառագիտության՝ հատկապես իմաստաբանական ոլորտին առնչվող ուսումնասիրու-

թյունները՝ ի հակակշիռ քերականականի. կառուցվածքային լեզվաբանությունն աստիճանաբար սկսեց զիջել իր դիրքերը, երբ ի հայտ եկան բառահիմաստային դաշտի ըմբռնման տեսական բազմաթիվ հետազոտություններ տարբեր լեզուներում:

Հայ լեզվաբանության մեջ հայերենի բառային կազմի իմաստաբանական քննությունը սահմանափակվել է կա՛մ ծագումնաբանական (բառերի կամ արմատների՝ ըստ թեմատիկ իմաստային դաշտերի տարաժամանակյա նկարագրության) [25: 108–112; 30], կա՛մ բառիմաստի փոփոխության տեսակների [29, 28: 218–248; 24: 169–189; 27: 198–268], կա՛մ բառակազմական իմաստաբանության [30] շրջանակում և այլն: Այս համատեքստում առանձնակի հիշատակման է արժանի Է. Աթայանի հիմնարար լեզվաբանական, նշանագիտական, լեզվափիլիսոփայական հետազոտությունը [23], որտեղ լեզվական և ոչ լեզվական աշխարհների պրիզմայում քննվում են լեզվական միավորների ներքին ձևավորումն ու գործառությունը, լեզվի նշանային, հաղորդակցման, ստորոգման և այլ համակարգերի փոխկապակցված դիալեկտիկական միասնության հարցերը: Հիշատակման արժանի է նաև Պ. Բեդիրյանի՝ վերջերս հրատարակած բառիմաստների թեմատիկ բառարանը [26], որտեղ բառերի թեմատիկ իմաստային խմբերը միաժամանակ ներկայացվում են՝ ըստ իրենց խոսքիմասային պատկանելության:

Ինչ խոսք, քերականական իմաստաբանությունն ավելի ուշ հայտնվեց լեզվաբանների հետազոտական տիրույթում [11, 16]. տևական ժամանակ բառն էր համարվում լեզվի հիմնական միավորը: Աստիճանաբար լեզվաբանական ուսումնասիրություններում միտում նկատվեց լեզվի համակարգը քննել նրա գործառության տեսակետից՝ դիտարկելով այն մեխանիզմների ըմբռնման տիրույթում, որոնք ապահովում են խոսքի իրացումը լեզվի համակարգում:

Շտապենք փաստել, որ բառահիմաստային դաշտ հասկացությունը դեռևս ամբողջական ու հստակ բնորոշում չի ստացել լեզվաբանության մեջ. ճշգրիտ տարորոշված չեն տերմինի կիրառության սահմանները: Սակայն մի բան հստակ է. այս հասկացության ներքո ամբողջանում են բառագիտության հիմնախնդիրները՝ հոմանիշությունը, հականիշությունը, բազմիմաստությու-

նը, բառի ու հասկացության հարաբերակցության և իրացման սահմանները: Ասել է թե՝ իմաստային դաշտը բառերի մի բազմություն է, որոնք միավորված են բովանդակության ընդհանրությամբ, այսինքն՝ ունեն իմաստի մեկնաբանության չչարչրկված ընդհանուր «անվանում», ըստ որի էլ ձևավորվում է տվյալ իմաստային դաշտի անվանումը՝ «Ժամանակ», «Փոփոխություն», «Կյանք և մահ», «Հայրենիք» և այլն:

Լեզվի բառային կազմում բառերի բազմատեսակ խմբավորումներ ձևավորելու գաղափարը առաջ է քաշվել տակավին XIX դարում ռուս լեզվաբան Մ. Պոկրովսկու [17], ինչպես նաև եվրոպական մի շարք լեզվաբանների կողմից (Պ. Ռոժե, Ֆ. Դորնզայֆ, Ռ. Հալլիգ, Վ. ֆոն Վարտբուրգ). վերջիններս ձեռնամուխ են եղել առաջին թեզաուրուսների՝ իմաստային բառարանների կազմման գործին: Սակայն լեզվում դաշտ հասկացության տեսական հիմնավորումը տրվեց XX դարի առաջին կեսին գերմանացի լեզվաբաններ Յ. Տրիրի և Գ. Իպսենի կողմից [1, 4, 3]. վերջինս անվանեց այն իմաստային դաշտ՝ որպես ընդհանուր նշանակությամբ օժտված բառերի ամբողջություն: Յ. Տրիրի բնորոշմամբ՝ հասկացական իմաստային դաշտը նախևառաջ հասկացությունների որոշակի ոլորտի կամ շրջանակի կառուցվածքն է: Իսկ լեզվում հասկացական դաշտին համապատասխանում է բառային կազմից որևէ հասկացական դաշտին հարաբերակցվող տարանջատված բառային դաշտը: Տրիրի իմաստաբանական տեսությունը զուգորդված է դիտարկում բառի՝ իմաստային՝ հասկացական դաշտով արտահայտված բովանդակության և խոսքային դաշտով արտահայտված լեզվական արտահայտության պլաններ: Նրա տեսադաշտում այն չափանիշի հայտնաբերումն է, որով ընդհանուր բառապաշարից հնարավոր է տարանջատել բառերի որոշակի խումբ: Իսկ այդպիսին տվյալ բառախմբի համար կարող է հանդիսանալ ընդհանուր նշանակության առկայությունը: Տրիրի կարծիքով, խոսողի կամ խոսակցի գիտակցության մեջ բառերն առկա են ոչ թե ցրված, այլ իմաստով միմյանց հետ կապակցված, որոնք ձևավորում են որոշակի մասնատվող ամբողջություն, կառուցվածք (Gefƀge), ինչը կարելի է անվանել բառային դաշտ կամ բառային նշանների (Wortzeichenfefd) լեզվական դաշտ: Բառային դաշտը

ստորադաս է անհամեմատ ներփակ հասկացական համակարգին, որի ներքին տրոհումը ներկայացված է բառային (նշանային) դաշտի մասնատված կառուցվածքում: Եզրակացությունն այն է, որ առանձին բառի նշանակությունը կախված է հարևան բառերի նշանակություններից, որոնք, լրիվությամբ ծածկելով հասկացական դաշտը, ձևավորում են մի յուրահատուկ խճանկար: Ի դեպ, այս տեսակետին էր նաև Իպսենը:

Տրիրի այս տեսությանը հարում էր կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչ Լ. Վայսգերբերը [6], ըստ որի բառի նշանակությունը չի կարող համարժեք նկարագրվել՝ առանց իմաստային դաշտում ներառված բառային միավորների: Նա բառի նշանակությունն ինքնուրույն միավոր չի համարում, այլ զուտ հարաբերական կառուցվածքային միավոր: Վայսգերբերը դիտարկում էր բառային դաշտերի երկու տեսակ՝ միաշերտ և բազմաշերտ: Միաշերտ դաշտերը մասնատելիս հենվում էր մեկ հատկանիշի վրա, բազմաշերտի պարագայում՝ տարբեր հատկանիշների, ընդ որում՝ առանձնացվում էր դաշտի միջուկային նշանակությունը: Թե՛ Տրիրը և թե՛ Վայսգերբերը իմաստային դաշտը դիտարկում էին հարացուցային (պարադիգմատիկ) կապվածության տեսանկյունից:

Սակայն իմաստային դաշտի այլ բնորոշումներում այն դիտարկվում է նաև որպես շարահյուսական համակարգ: Այս գաղափարի հեղինակը գերմանացի լեզվաբան Վ. Պորցիգն է [2], որն այն դիտարկում է շարակարգային (սինտագմատիկ) կապվածության տեսանկյունից: Շարակարգային դաշտերը բառակապակցություններ են և այլ շարահյուսական միավորներ, որոնք օժտված են երկու բաղադրիչների իմաստային համատեղելիությամբ. սրանք նա անվանում է տարրական դաշտեր: Դրանք բայի և գոյականի, ածականի և գոյականի յուրահատուկ հարաբերակցություններ են, որոնք նշանակում են տվյալ գործողության կամ վիճակի սուբյեկտը, գործողության գործիքը կամ օբյեկտը: Որպես բնութագրական օրինակներ Պորցիգը բերում է հետևյալ զույգերը՝ գնալ-ոտք, տեսնել-աչք, բռնել-ձեռք, լսել-ականջ, լիզել-լեզու, ծաղկել-բույս, հաչել-շուն, խրխնջալ- ձի և այլն:

Իմաստային դաշտի բնորոշման ուշագրավ դիտարկում ունի ռուս լեզվաբան Բ. Գորոդեցկին, որն այն սահմանում է հետևյալ կերպ. «Իմաստային դաշտը որևէ իմաստային շերտում ֆիքսված նմանությամբ և առանձնահատուկ իմաստային հարաբերություններով կապված իմաստային միավորների ամբողջությունն է: Նշանակողական շերտի համար այս նմանությունը մեկնաբանվում է որպես կապ հասկացությունների որոշակի ամբողջության հետ, տարբերակիչ շերտի համար՝ որպես կապ արտաքին աշխարհի միևնույն օբյեկտների հետ, արտահայտման շերտի համար՝ որպես կապ խոսքային հաղորդակցման պայմանների միևնույն ամբողջության հետ, շարահյուսական շերտի համար՝ որպես կապ խոսքային հատվածների միջև շարահյուսական հարաբերությունների միևնույն ամբողջության հետ: Այսպիսով, յուրաքանչյուր իմաստային շերտում առկա են իմաստային դաշտեր» [8: 173]: Ասվածից կարելի է եզրակացնել, որ իմաստային դաշտը ներկայանում է որպես կառուցվածք, որի բաղադրիչները գտնվում են հարաբերականորեն կայուն միասնության մեջ, նրա միջոցով լեզվական տարածքը կարելի է տրոհել համաձին (հոմոգեն) մասերի, որոնցից յուրաքանչյուրն ինքնին ներկայացնում է միավորների սերտորեն փոխկապակցված և փոխներգործուն մի ամբողջություն՝ միավորված հարացուցային խմբավորումների ողջ ներկապնակով: Ընդ որում, այնտեղ կարող են տեղ գտնել տարաբնույթ կարգերի պատկանող այս կամ այն իմաստային հատկանիշով նույնական լեզվական միավորներ. այս դեպքում չի բացառվում, որ նույն բառը միաժամանակ ընդգրկվի տարբեր բառաիմաստային հարացույցներում՝ դասերում, որտեղ ներառված բառերը որոշակի իմաստային հատկանիշով հակադրվում են միմյանց:

Այսպիսով, ցանկացած բառ բազում հարաբերություններով անմիջականորեն կապված է հարյուրավոր բառերի հետ, իսկ հազարավորների հետ էլ այդ կապը միջնորդավորված է: Անշուշտ այդ հարաբերություններում գլխավորը իմաստային հենքն է, որն օժտված է այս կամ այն չափով կրկնվող ձևային նմանությամբ և տարբերությամբ: Բառային հարացույցը ներկայացնող բառային հակադրությունների միջև առկա կապերի տեսանկյունից լեզ-

վի բառային կազմը ներկայանում է որպես առանձին բառերի՝ միմյանց հետ խաչաձևվող կապերի մի բարդ ու բազմաշերտ ցանց, որը հնարավոր է մեկնաբանել բառային հարացույցի մեկ այլ՝ ավելի ընդգրկուն տեսակով՝ բառերի դասերով: Սրանք ենթադրում են բառային միավորումների առավել ծավալուն ու բարդ հարացույցներ, քան բառային հակադրություններն են (հոմանիշություն, հականիշություն, համանունություն, հարանունություն ևն): Ցանկացած դասի հիմքում ընկած է բառերի նմանության սկզբունքը՝ ըստ որևէ ընդհանուր բաղադրիչի: Ահա հենց այս բաղադրիչն էլ հանդիսանում է տվյալ դասում միավորված բառերի ընդհանրական բնութագրիչը:

Որոշ լեզվաբաններ տարբերում են բառերի դասերի երեք տեսակ՝ ձևական, ձևական-իմաստային և իմաստային [14: 69–70]: Ձևական դասում բառերը միավորված են՝ ըստ ածանցական ձևույթների նմանության, ասենք՝ նույնատիպ խոնարհման բայեր կամ նույնատիպ հոլովման գոյականներ (խոսել, վազել, օր, ժամ, տարի, կեսօր ևն): Ձևական-իմաստային դասերն ավելի բնութագրական են լեզվի համար: Սրանք բառերի այն միավորումներն են, որոնց նմանությունն արտահայտվում է թե՛ ձևով, թե՛ իմաստով, ինչպես օրինակ՝ խոսքի մասերը, մենարմատ բառերի բառաբները (գիր, գրություն, գրել ևն), մեկ բառակազմական կաղապարով ձևավորված բառերի խմբերը (ուսանող, գրող, ընթերցող, հետազոտող ևն):

Լեզվում հաճախադեպ չեն «մաքուր» իմաստային դասերը, որոնք կարող են հանդես գալ հոմանիշային շարքերով, երբ շարքի անդամները ձևական նմանություն չունեն (դատարկ, սին, փուչ, թափուր, պարապ, պատիր ևն):

Բառերի դասերի նշված տեսակները ձևավորում են բառային հարացույցների մի բարդ ոլորտ, որտեղ դասերից յուրաքանչյուրը կարող է դիտարկվել որպես իմաստային հարացույցների դասակարգման մասնավոր, տեսակային դրսևորում: Լեզվի բառային համակարգում նման հարացուցային միավորումների բարդության և բազմաշերտության մասին ուշագրավ է Վ. Վինոգրադովի հետևյալ դիտարկումը. «Իմաստային երևույթները («նշանակությունները») լեզվում ձևավորում են ներքին կապված շարքեր՝ հիմնված


ընդհանուր բաղադրիչի կամ հատկանիշի վրա, և նախևառաջ հարաբերակցվում են այդ շարքերի ներսում: Այդ շարքերն էլ, իրենց հերթին հետևելով նույն սկզբունքին, հանդիսանում են բարձրագույն դասի անդամներ և այդպես շարունակ: Անշուշտ «այդ բոլոր շարքերը» ոչ միայն հարաբերակից են, այլև օժտված են փոխադարձ կապակցվածությամբ և կախվածությամբ» [7]:

Այսպես, դիտարկենք «Անձերի և կենդանիների ավանումներ» բառերի դասերի խումբը, որը նախապես կարելի է տրոհել չորս ենթադասի՝ 1. «Անձերի անվանումներ», 2. «Կենդանիների անվանումներ», 3. «Անձերի և կենդանիների համար ընդհանուր անվանումներ», 4. «Մարմնի, օրգանիզմի, նրա մասերի, կենսագործունեության մթերքների անվանումներ»: Միայն առաջին ենթադասը դիտարկելու դեպքում կհայտնաբերենք «անձ, անձեր» նշանակող բառերի մի հսկա շերտ՝ միավորված ընդհանուր նշանակություններով: Օրինակ, նշված վերացական իմաստային բաղադրիչն իր բառային դրսևորումներում կոնկրետանում է որպես՝ 1. մարդ, մարդիկ, 2. մարդակերպ առասպելական էակ, ինչպես՝ հրեշտակ, չարք, աստված, փերի, սատանա ևն, 3. մարդուն հավասարազոր նպատակաուղղված գործող սուբյեկտ, ինչպես՝ երաշխավոր, հովանավոր, առաքիչ, ստացող, բեռնափոխադրող ևն: «Ռուսերեն իմաստաբանական բառարանում» [18] «Անձերի անվանումներ» ենթադասը կարող է տրոհվել կամ ճյուղավորվել առնվազն իմաստով միավորված բառերի 12 ենթադասերի, որոնցից 8-ն իրենց հերթին ունեն բազում այլ իմաստային ճյուղավորումներ: Դիտարկենք այդ հիմնական ենթադասերից մի քանիսը [18: 66–80] (տե՛ս ***Աղյուսակը***):

Աղյուսակում ներկայացված տրոհումները շարունակելի են՝ իրենց մակրո- և միկրո- բառերի դասերով: Օրինակներից պարզորոշ երևում է, որ դաշտ հասկացության ներքո «….ենթադրվում է լեզվական (բառային) միավորների այն ամբողջությունը, որը միավորված է ընդհանուր բովանդակությամբ (երբեմն նաև ձևական ցուցիչների ընդհանրությամբ) և արտացոլում է մատնանշվող երևույթների հասկացական, առարկայական կամ գործառութային նմանությունը» [15: 380], և որ «….դաշտը ընդհանուր (ինվարիանտ) հատկանիշներով օժտված լեզվաբանական տարրերի գոյության և խմբավոր-

ման միջոց է» [22: 135], երբ «….իմաստային դաշտի յուրաքանչյուր դաս բացահայտում է որոշակի կառուցվածք՝ մի յուրատեսակ միջուկ և կենտրոնական հատված, ինչպես նաև ծայրամասեր:

Աղյուսակ 1



Իմաստային դաշտի «ոլորտների» շրջանակում նրա տարբեր միավորներ հայտնվում են օրինաչափորեն կապված զանազան կրկնվող կանոնավոր հարաբերությունների մեջ. այդպիսի միավորները հաճախ տարբերակվում են ոճականորեն» [5: 67–68]:

Վերոնշյալ բնորոշումներից կարելի է եզրակացնել, որ բառաիմաստային դաշտում առկա հարացուցային հարաբերություններում տարբերակիչը միայն գծային «դասակարգումը» չէ. միևնույն բառը կարող է միաժամանակ ընդգրկվել տարբեր բառաիմաստային հարացույցներում, ասել է թե՝ շարքերում, որոնցում բառերը միմյանց հակադրված են որևէ իմաստային հատկանիշով:

Այս առումով երկու ուշագրավ դիտարկում ունի ռուս լեզվաբան Դ. Շմելյովը, որը, մասնավորապես, նշում է՝ նախ «….բառերի միջև առկա հարացուցային հարաբերությունները կախված են իրական առարկաների միջև առկա հարաբերություններից: Հանդես գալով որպես հենց այդ իրական առարկաների խմբավորման արտացոլում՝ բառերի նման միավորումները, սակայն, ի հայտ են բերում մի շարք այնպիսի յուրահատկություններ, որոնք բնորոշվում են կոնկրետ լեզվի հատկանիշներով….»: Երկրորդ՝ «….բառային կազմում առկա հարացուցային հարաբերությունները ոչ միայն բազմաստիճան են, այլև միագիծ չեն:

Միևնույն բառերը միաժամանակ կարող են ընդգրկվել տարբեր բառաիմաստային հարացույցներում, ուստի բառային նշանակության (իմաստային հատկանիշի) յուրաքանչյուր էական տարր ընդգծվում է որպես էական տվյալ նշանակության համար, ինչը պայմանավորված է որոշակի հարացուցային հակադրությամբ բառի՝ որևէ այլ բառի կամ մի քանի բառերի նկատմամբ» [21: 107–108]:

Հայտնի իրողություն է, որ բառի իմաստը բնորոշվում է ինչպես արտալեզվական (մարդկային գիտակցության միջոցով արտացոլվող իրական աշխարհը), այնպես էլ ներլեզվական գործոններով: Արտալեզվականի պարագայում, երբ բառերի դասերի հիմքում դրվում է բառերի միջոցով արտահայտվող երևույթների իրական էությունը, մենք գործ ունենք իմաստային

դաշտի հետ, որը «….պետք է որոշակիորեն համապատասխանի լեզվակրի մտածողության կառուցվածքին» [13: 175]: Հարկ է նշել, որ դաշտի սահմանները հստակությունից զուրկ են. նրանում կարող են ընդգրկված լինել ինչպես ուղղակի հակադրությամբ կապված տարբեր խոսքիմասային պատկանելության բառեր, այնպես էլ բառեր՝ զուտ զուգորդական հարաբերակցությամբ: Ասվածի տիպական օրինակ կարող է հանդիսանալ Յու.Կարաուլովի կողմից վերոնշյալ աշխատության մեջ ներկայացված «Հիվանդություն» դաշտի կազմը՝ բաղկացած 52 բառից՝ գոյականներ (հիվանդություն, անգինա, արյուն, օրգան, վիրահատություն, առողջություն ևն), բայեր (հիվանդանալ, վնասել, հազալ, թուլացնել, պառկել ևն), ածականներ (ներքին, վնասակար, նյարդային, բժշկական ևն). ընդ որում, դաշտում ներկայացված են նաև ուղղակի հակադրություններով կապված բառեր, ինչպես՝ հիվանդություն-գրիպ, հիվանդություն-մրսել, միջոց-անդորր, նաև բառեր՝ անուղղակի, հավանական զուգորդությամբ, ինչպես՝ կոտրել, տագնապ, ծերություն, վատ, հոգատարություն, պառկել, սատարել: Դաշտի նման բաղադրությունն էլ հիմք է տալիս հեղինակին իմաստային դաշտը կապել առավելապես արտալեզվական բնույթ ունեցող թեմատիկ, հասկացական և զուգորդական դաշտերի հետ:

Իմաստային դաշտի ըմբռնման համանման մոդել է առաջադրում նաև Վ. Դենիսենկոն, երբ առաջարկում է այն «….դիտարկել երեք առանցքով՝ հարացուցային, շարակարգային և էպիդիգմատիկ[1] ….դաշտը վերականգնելիս նպատակահարմար է հաշվի առնել նաև բառերի զուգորդական կապերը և սուբյեկտիվ գործոնը, այսինքն՝ խոսողի վերաբերմունքը իրականության, հաղորդման և խոսակցի նկատմամբ: Այս դեպքում դաշտը վերականգնվում է ոչ թե իր ներսում, այլ ուրիշ դաշտերի և աշխարհի լեզվական ողջ պատկերի

[1] Էպիդիգման (հուն. *Επιδοσις* – հավելում, աճե) բազմիմաստ բառերում պատմականորեն ձևավորված հիերարխիկ սերող նշանակությունների ամբողջությունն է: Բառի էպիդիգմատիկ վերլուծության պարագայում դիտարկվում են ինչպես մասերի ամբողջացման (ինտեգրալային), այնպես էլ տարբերական (դիֆերենցիալ) հատկանիշների խմբեր, որոնց միջոցով հնարավոր է դառնում սահմանել իմաստների ածանցյալ ներբառական կախվածությունները՝ իմաստներից մեկը մյուսից սահմանազատելով:

հետ նրա կապի առումով, որը ներառված է լեզվական անհատի կառուցվածքում» [9: 3–4]: Այս դրույթից կարելի է եզրակացնել, որ իմաստային դաշտը ներկայանում է ոչ միայն զուտ լեզվական կապերի (հարացուցային, շարակարգային և էպիդիգմատիկ) միջոցով, այլև միաժամանակ արտալեզվական իրողությունների գնահատմամբ:

Բառաիմաստային դաշտի այլ բնորոշումներում նրա հիմնական բնութագրիչներ համարում են նաև ծավալային ընդգրկվածությունը, իմաստային բակառությունը (նախադասության անդամների կապը՝ ըստ իմաստի) և ոչ թե երկանդամ հակադրությունը, ամբողջականությունը, կանոնավորվածությունը, բաղադրիչների փոխորոշելիությունը, լիակազմությունը, սահմաններ ազատությունն ու ողողվածությունը [10: 127], երբեմն էլ էական է համարվում դաշտում ներառել տարբեր խոսքի մասեր ներկայացնող բառեր [20: 49], երբեմն էլ միևնույն թեմայի ներքո ընդգրկել նրա բաղադրիչ տարրերը:

Ասվածի համատեքստում ուշագրավ է նաև Յու. Կարաուլովի կողմից առաջարկվող լեզվի բառային կազմի իմաստային տրոհման մոդելը: Նա անհրաժեշտ է համարում «….բառային կազմի տարբեր ոլորտներ տրոհել իմաստային դաշտերի (օրինակ՝ «ուրախություն» դաշտը), բառաիմաստային խմբերի (օրինակ՝ «փոփոխություն» նշանակությամբ բառերի խումբ), թեմատիկ խմբերի (օրինակ՝ «թռչունների անվանումներ»), հոմանիշային շարքերի (օրինակ՝ «քաջ» ընդհանուր նշանակությամբ շարք), անվանողական խմբերի (օրինակ՝ «ժամանակ» հասկացության արտահայտումը գոյականների միջոցով)» [20: 314; 19]:

Ըստ էության, թեմատիկ խմբերից շատերն ինքնին բառաիմաստային խմբեր են. «արտալեզվական» իրողությունները հաճախ սերտորեն խաչաձևվում են «զուտ լեզվականի» հետ, և վերջիններիս մեկուսացված դիտարկումն ըստ էության հնարավոր էլ չէ [21: 105]: Այնուամենայնիվ, որոշակի լեզվական բնութագրիչներով օժտված բառերի դասերում կարող են ընդգրկվել խոսքի մասերը, բառաքերականական կարգերը, բառաիմաստային խմբերը և հոմանիշային շարքերը: Այսպիսի տարաբաժանման հիմքում ընկած է բառերի նշանակությունների նմանությունը՝ ըստ իմաստային բաղադրիչի, իսկ

տարբերությունը բխում է այս դասերի հիմքը կազմող այն իմաստույթների քանակից ու որակից, որոնք ընդհանուր են տվյալ դասը կազմող բոլոր բառերի համար: Ի դեպ, բառերի ամենաճավալուն դասը խոսքի մասերն են, չնայած նրանցում ընդգրկված բառերի նշանակությունների նմանությունը հասցված է նվազագույնի. նրանցում առկա է քերականական կարգի մեկ ընդհանուր իմաստույթ: Այսպես, գոյականի պարագայում այն «առարկայականությունն» է, բայերի դեպքում՝ «գործողությունը», ածականինը՝ «առարկայի հատկանիշը»: Մեր կարծիքով, լեզվի բառային համակարգի իմաստային համակցելիության խճանկարում վերոնշյալ բառերի դասերում առավել տիպական կարող են լինել բառաիմաստային խմբերը:

Բառաիմաստային խմբերում միավորված են նույն խոսքիմասային պատկանելությունն ունեցող բառերը, որոնցում բացի ընդհանուր քերականական իմաստույթներից՝ առկա է առնվազն մեկ ընդհանուր կարգային-բառական դասույթ (գերիմաստույթ, архисема, классема): Օրինակ, «սեղան» բառի նշանակության մեջ «առարկա» քերականական իմաստույթը ճշգրտվում է «կահույք» կարգային-բառական իմաստույթով, որին ստորադասվում են «գրելու/ճաշելու/վիրահատման և այլնի համար նախատեսված», «կլոր/քառակուսի և այլ ձև ունեցող, սովորաբար չորս ոտք ունեցող» ճշգրտող իմաստույթները: Նման կարգային-բառական իմաստույթներն էլ ձևավորում են հենց բառաիմաստային դաշտեր, ինչպես՝ ասացական բայեր (ասել, խոսել, հարցնել, պատասխանել ևն), գույն կամ երանգ նշանակող ածականներ (կարմիր, կապույտ, դեղնավուն), սպասք նշանակող գոյականներ (ափսե, բաժակ, դանակ, պատառաքաղ ևն): Նշենք նաև, որ այս բառաիմաստային խմբերից կարող են ածանցվել ենթախմբեր (ենթահարացույցներ), որոնցում բառերը կարող են միավորված լինել ոչ միայն կարգային իմաստույթով, այլև նրանց համար ընդհանուր տարբերակիչ իմաստույթով, ինչն արդեն այլ ուսումնասիրության նյութ է:

Այսպիսով, բառաիմաստային դաշտ հասկացության ներքո բառի նշանակությունն ըմբռնվում է ոչ որպես ինքնուրույն միավոր, այլ որպես հարաբերությունների համադրություն դաշտի բաղադրիչների մյուս նշանակու-

թյունների հետ: Ընդ որում, դաշտը կարող է ներառել նաև այլ լեզվական միավորներ (օրինակ՝ բառակապակցություններ), սակայն վերոնշյալ բնորոշումներից կարելի է եզրակացնել, որ դաշտը միավորում է հենց բառույթներ կամ բառաիմաստային տարբերակներ: Հարկ է նշել, որ դաշտում ընդգրկված հասկացությունների աստիճանակարգված դասակարգման ընդհանրական մոտեցում չկա: Ըստ էության, իմաստային դաշտ ասելով՝ նկատի է առնվում ոչ թե բառերի խումբը, այլ նրանց միջև առկա իմաստային հարաբերությունները, ասել է թե՝ իմաստային դաշտը բառերի բազմություն է՝ նրանց իմաստային նկարագրության մի ուրվագիծ: Դաշտը բնորոշվում է երկու փոխպայմանավորող հատկանիշներով՝ իմաստի միասնականությամբ և տարբերականությամբ: Այլ դեպքերում այն կարող է ներկայացնել ոչ միայն ներլեզվական, այլև արտալեզվական մշակութային համակարգ, ինչպես օրինակ, ազգակցական հարաբերություններ նշանակող իմաստային դաշտը, ինչը հնարավոր կդարձնի համեմատել տարբեր մշակույթների ազգակցական և ամուսնական համակարգերը տվյալ պատմական ժամանակաշրջանի համար (օրինակ՝ կին, ամուսին, մայր, հայր, դուստր, որդի, քույր, եղբայր, տատ, պապ, թոռ, թոռնուհի, մորաքույր, մորեղբայր/քեռի, հորաքույր, հորեղբայր, զարմիկ, զարմուհի, հարս/նու (եղբոր կին), հարսնացու, փեսա/քեռայր, զոքանչ, սկեսուր, սկեսրայր, խնամի/խնամամայր, հարսնախոս/խնամախոս, տալ, տեգր/տայգր, քենի, քենակալ, աներորդի/աներձագ ևն):

Ժամանակակից իմաստաբանության մեջ բառապաշարի նկարագրության մեթոդների շրջանակում իմաստային դաշտը նվազ կիրառություն ունի: Սա, ինչպես արդեն նշեցինք, պայմանավորված է դաշտ հասկացության ոչ ընդհանրական ըմբռնմամբ, ինչպես նաև տարբեր իմաստային դաշտերի միջև առկա հստակ սահմանազատմամբ, երբեմն որոշ բառերի՝ բազում այլ իմաստային դաշտերին պատկանելու հանգամանքով: Ուստի ավելի նպատակահարմար է դառնում իմաստաբանական քննությունը կառուցել առավել պարզ ու կանոնավոր իմաստային հարաբերությունների՝ բառաիմաստային խմբերի նկարագրության վրա:

Մի կարևոր հավելում ևս: Որպես աշխարհի լեզվական պատկերի արտացոլման մանրակերտ՝ իմաստային դաշտերի ուսումնասիրությունն այսօր էլ պահպանում է իր գիտական արդիականությունը՝ ծնունդ տալով լեզվաբանության մի նոր ճյուղի՝ «մարդաբանական» լեզվաբանությանը, երբ բառաիմաստային դաշտերի քննությամբ հնարավոր է դառնում լեզվի գործառությունը դիտարկել որպես մարդու աշխարհընկալման կենսաբանական, հոգեբանական, սոցիալական, ազգային-մշակութաբանական գործոնների ազդեցություն:

ЛИТЕРАТУРА

1. *Ipsen G.* Der alte Orient und die Indogermanen // Stand und Aufgaben der Sprachwissenschaft. – Heidelberg: Winter, 1924. – SS. 200–237.
2. *Porzig W.* Wesenhafte Bedeutungsbeziehungen. – Beiträge zur Geschichte der deutschen Sprache und Literatur, 1934, Bd. 58. – SS. 70–97.
3. *Trier J.* Altes und Neues vom sprachlichen Fold, Mannheim-Z., 1968. – 20 s.
4. *Trier J.* Der deutsche Wortschatz im Sinnbezirk des Verstandes. – Heidelberg: Winter, 1931. – 136 s.
5. *Абрамов В.П.* Семантические поля русского языка. Монография. – М.: Акад. пед. и соц. наук РФ; – Краснодар: Кубан. гос. ун-т, 2003 (Тип. КубГУ). – 337 с.
6. *Вайсгербер Й.Л.* Родной язык и формирование духа = Muttersprache und geistesbildung / Й.Л. Вайсгербер; пер. с нем., вступ. ст. и коммент. О.А. Радченко. – 2-е изд-е, испр. и доп. – М.: УРСС, [2004] (Тип. ООО Рохос). – 229 с.
7. *Виноградов В.В.* Об омонимии и смежных явлениях // Избр. труды: Исследования по русской грамматике. – М., 1975. – СС. 295–312.
8. *Городецкий Б.Ю.* К проблеме семантической типологии. – М.: Изд-во Моск. ун-та, [1969]. – 564 с.
9. *Денисенко В.Н.* Семантическое поле «изменение» в русской языковой картине мира: Структурный, функциональный, когнитивный аспекты: диссертация ... доктора филологических наук: 10.02.01. – М., 2005. – 337 с.
10. *Денисов П.Н.* Лексика русского языка и принципы ее описания. – М.: Русский язык, 1980. – 253 с.

11.*Караулов Ю.Н.* Ассоциативная грамматика русского языка. – М.: Русский язык, 1993. – 330, [1] с.
12.*Караулов Ю.Н.* Лингвистическое конструирование и тезаурус литературного языка. – М.: Наука, 1981. – 366 с.
13.*Караулов Ю.Н.* Общая и русская идеография / Ю.Н. Караулов, АН СССР, Отд-ние литературы и яз., Ин-т языкознания. – М.: Наука, 1976. – 354 с.
14.*Кузнецова Э.В.* Лексикология русского языка: Учеб. пос. для филол. фак. ун-тов. – 2-е изд-е, испр. и доп. – М., «Высшая школа», 1989. – 216 с.
15.Лингвистическое конструирование и тезаурус литературного языка / Ю.Н. Караулов. – М.: Наука, 1981. – 366 с.
16.Лингвистический энциклопедический словарь / [Науч.-ред. совет изд-ва «Сов. энцикл.», Ин-т языкознания АН СССР]; Гл. ред. В.Н. Ярцева. – М.: Сов. энцикл., 1990. – 682, [3] с.
17.*Покровский М.М.* Семасиологические исследования в области древних языков. – М.: Унив. тип-фия, 1895. – 132 с.
18.Русский семантический словарь: Толковый словарь систематизированный по классам слов и значений в 6-и тт. / [Н.Ю. Шведова и др.]; под общ. ред. Н.Ю. Шведовой. – М.: ИРЯ РАН, 2002. – Т. 2. – 788 с.
19.*Сентенберг И.В.* Лексическая семантика английского глагола: Учеб. пособие к спецкурсу / И.В. Сентенберг. – М.: МГПИ, 1984. – 96 с.
20.*Степанова Г.В.* Введение в семасиологию русского языка: Учеб. пособие / Г.В. Степанова, А.Н. Шрамм. – Калининград: КГУ, 1980. – 72 с.
21.*Шмелев Д.Н.* Проблемы семантического анализа лексики: (На материале русского языка). – М.: Наука, 1973. – 280 с.
22.*Щур Г.С.* Теории поля в лингвистике. – М.: «Наука», 1974. – 254 с.
23. *Աթայան Է.Ռ.* Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը: – Ե.: Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981: – 390 էջ:
24. *Աղայան Է.Բ.* Ընդհանուր և հայկական բառագիտություն: – Ե.: ԵՊՀ հրատ., 1984: – 372 էջ:
25. *Ամատյան Հր.* Հայոց լեզվի պատմություն, I մաս: – Ե., 2013: – 222 էջ:

26. *Բեդիրյան Պ.* Բառերի և արտահայտությունների թեմատիկ բառարան-գանձարան [թեզաուրուս]: – Ե., 2019: – 224 էջ:
27. Հայոց լեզու, Ա պրակ / Էդ. Աղայան, Բառագիտություն: – Ե., 1980:
28. Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում / Պ. Բեդիրյան, Բառիմաստի փոփոխություններ: – Ե., 1973:
29. *Մուրվալյան Ա.* Հայոց լեզվի բառային կազմը: – Ե., 1955: – 435 էջ:
30. *Ջահուկյան Գ.* Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն: – Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989: – 319 էջ:
31. *Ջահուկյան Գ.* Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան: – Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1987: – 747 էջ:

«ԲԱՌԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա.Ռ. Մարտիրոսյան
artashesmartirosyan@yandex.ru

Բ.գ.թ., դոցենտ, կուլտուրայի ֆակուլտետի դեկանի տեղակալ,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից լեզվաբանությունը ցայսօր չունի բառաիմաստային դաշտ հասկացության ընդհանուր բնորոշումը. տերմինի կիրառության սահմանները հստակեցված չեն: Սակայն միանգամայն ակնհայտ է, որ այդ հասկացության ներքո ընդհանրացվում են բառագիտության հիմնական խնդիրները՝ հոմանիշությունը, հականիշությունը, բազմիմաստությունը, բառի և հասկացության սահմանների հարաբերակցությունն ու իրացվելիությունը:

Որպես աշխարհի լեզվական պատկերի արտացոլման մանրակերտ՝ իմաստային դաշտերի ուսումնասիրություններն այսօր էլ գիտականորեն օրախնդիր են այն տեսակետից, որ ծնունդ են տվել լեզվաբանության մի նոր ոլորտի՝ մարդաբանական լեզվաբանությանը: Իմաստային դաշտերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում լեզվի գործառությունը դիտարկել նաև կենսաբանական, հոգեբանական, սոցիալական և ազգամշակութային գործոնների ազդեցության ծիրում:

Բանալի բառեր՝ բառային կազմ, բառաիմաստային դաշտ, հասկացական դաշտ, հարացուցային հարաբերություններ, շարակարգային հարաբերություններ, էպիդիգմատիկ հարաբերություններ, բառերի դասեր, իմաստային հատկանիշ, արտալեզվական գործոն, ներլեզվական գործոն:

ON THE ISSUE OF UNDERSTANDING THE CONCEPT OF «LEXICAL-SEMANTIC FIELD»

A. Martirosyan

artashesmartirosyan@yandex.ru

Candidate of Philological Sciences, Associate Professor,
Deputy dean of the «Culture» faculty,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

Since the last decades of the XX century, a significant place in the linguistic research of different languages is occupied by numerous theoretical works on the perception of the lexical and semantic field. In Armenian linguistics semantic study of the vocabulary of the Armenian language was limited to either in

the genealogical framework (Gr. Acharyan, G.Jahukyan), or in descriptions of semantic change (A.Murvalyan, Ed.Aghayan), either through a derivational semantics (G.Jahukyan), etc.
In the aspect of the layout of the reflection of the language picture of the world, the study of semantic fields has not lost its scientific relevance today, becoming the founder of a new branch of linguistics – anthropological linguistics. The study of semantic fields makes it possible to consider the functioning of language in terms of the influence of biological, psychological, social and cultural-national factors.
Keywords: lexical composition, lexical-semantic field, conceptual field, paradigmatic relations, syntagmatic relations, epidigmatic relations, word classes, semantic attribute, extralinguistic factor, intra-linguistic factor.

Информация о статье:
статья поступила в редакцию 29 ноября 2020 г.,
подписана к печати в номер 7 (11) / 2021 – 19.02.2021 г.